

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՀԱՐԱԿԱՏԱՐՆ ՈՒ ԱՆՑՅԱԼԻ ՀԱՐԱԿԱՏԱՐԸ
ԲԱՅԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ ԵՆ

Ա. Ս. ՄԱՐԿԱՐՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդես»-ի «Բանավեճեր և քննարկումներ» բաժնում բանասիրական գիտությունների թեկնածու, անդլիագետ Հ. Ա. Աս-մանդուլյանը հանդես է եկել «Հայերենի բայի խոնարհման ձևերի համա-կարգի շուրջը» հոդվածով¹, որտեղ և նպատակ է գրել ցույց տալ, թե «հարա-կատար դերբայով կազմված կապակցությունները՝ այսպես կոչված «հարա-կատար ժամանակները» բնավ ժամանակային ձևեր չեն և «պիտի դուրս բեր-վեն հայերենի խոնարհման համակարգից»²:

Բր այդ մտրի ճշտությունը և առաջադրած պահանջի իրադործման ան-հրաժեշտությունը հիմնավորելու համար նա ամենից առաջ հայտարարում է, թե հայագիտության մեջ «արդի գրական հայերենի բայի ժամանակային ձևերի թվի ու կազմի հարցում միասնական կարծիք գոյություն չունի»³, և հատկա-պես մեծ տարածայնություններ կան բայի երկու ձևերի՝ վաղակատարի և հա-րակատարի առանձնացման հարցում:

Նմանօրինակ պնդումը, սակայն, ձիշտ չէ, և ժամանակակից հայերենի բայի խոնարհման ձևերի համակարգի ուսումնասիրության բնագավառում հայագիտության՝ Յոհան Սկրոգերի «Արամեան լեզուին դանձ» («Thesaurus linguae Armenicae») աշխատության ժամանակից (1711 թ.) մինչև օրս ձեռք բերած նվաճումները բոլորովին այլ բան են ասում:

Ո՞րն է իսկապես ճշմարտությունը. ճշմարտությունն այն է, որ հայ լեզ-վաբանական միտքը աշխարհաբարի, իբրև հայերենի լեզվական նոր որակի, ձևավորման շրջանից սկսած զբաղվելով նրա կառուցվածքի, լեզվական-քերա-կանական իրողությունների ուսումնասիրությամբ, հատուկ ուշադրություն է դարձրել նաև բայի խոնարհման համակարգի վրա և կարողացել ժամանակի ընթացքում բացահայտել նրա լիարժեք պատկերը: «Ժամանակի ընթացքում» ենք ասում, որովհետև սկզբից ու մեկեն հնարավոր չէր որոշել բայի խոնարհ-ման բոլոր ձևերը և մեկընդմիշտ գիտական վերջնական խմբավորման են-թարկել դրանք: Հասկանալի է, որ նա դրան կարող էր հասնել և հասնում է միայն բավարար հիմքեր ստեղծվելուց հետո՝ այն ժամանակ, երբ հայ լեզ-վաբանության ասպարեզն է մտնում մի այնպիսի խոշոր գիտնական ու քերա-կան, ինչպիսին Մանուկ Աբեղյանն էր:

Եթե մինչ Մ. Աբեղյանը ժամանակակից հայերենի բայի խոնարհման ձևերը, այսինքն՝ նրա հինգ եղանակները իրենց համապատասխան ժամանակ-

¹ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1963, N 2, էջ 151—162:

² Նույն տեղում, էջ 161:

³ Նույն տեղում, էջ 154:

ներով, մի ընդհանուր համակարգի տակ չէին առնված, եթե որոշ եղանակներ, իբրև այդպիսին, չէին ճանաչված, եթե որոշ ժամանակներ տարրեր եղանակների մեջ էին մտցված, եթե մի քանի ժամանակներ իրարից չէին առանձնացված, եթե անհրաժեշտ սահմանադիժ չէր անցկացված բայի խոնարհման գլխավոր և երկրորդական ձևերի միջև և այլն և այլն, ապա հենց Մ. Արեղյանից սկսած և հենց Մ. Արեղյանի կողմից՝ լեզվաբանական պոզիտիվիստ տրամաբանությամբ դիտական կուռ մշակման է ենթարկվում ժամանակակից հայերենի բայի խոնարհման համակարգը, և այդպիսով ստեղծվում է մի ասփոփական ուսմունք⁴, որ կյանքում լավագույն քննություն բռնելով՝ այսօր էլ մնում է ամուր ու հաստատուն:

Եվ դրանով հենց պետք է բացատրել, որ բոլոր այն փորձերը (վաղակատարն ու հարակատարը վերստին մի ժամանակ համարելը, պայմանական սահմանական եղանակի ժամանակ դիտելը և այլն), որ արվել են իբրև թե որոշ ճշտումներ կամ շտկումներ կատարելու նպատակով, ոչնչով չխախտելով Մ. Արեղյանի կողմից մշակված բայի խոնարհման ուսմունքը՝ մերժվել են ու մնացել անհետևանք:

Հարակատար ու անցյալի հարակատար ժամանակները հայերենի բայի խոնարհման համակարգից դուրս բերելու առաջարկը նույնպես, մեր կարծիքով, այլ բան չէ, քան նման մի անհաջող փորձ, որ, ինչպես ցույց կտանք, ոչնչով չի հիմնավորվում:

Տեսնենք հարցի պատմությունը հայ քերականագիտության մեջ:

Հարակատար դերբայով և նմ բայով արտահայտված կապակցությունները հաճախակի (իմա՝ հարակատար ներկան...) և գերակատար (իմա՝ անցյալի հարակատարը) անվանումներով վաղակատարի ու անցյալի վաղակատարի հետ մեկտեղ սահմանական եղանակի ժամանակ են (դրված եմ, էի, կամ ի, ես, իր...) դիտվել դեռևս Յոհան Սկրոդերի կողմից:

Երևույթն այդպես է բմբռնել ու ներկայացրել հայ մեծ լուսավորիչ-դեմոկրատ Խ. Աբովյանը իր «Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարժից» աշխատության մեջ, որտեղ և իբրև հարակատարի ու գերակատարի ձևեր հիշատակվում են «գործել եմ կամ գործած եմ, ես, է (ա). ենք, էինք, էիք. գործվել եմ կամ գործված եմ, ես, է (ա). ենք... էինք», այլև «մոտեցրած եմ, ես... էի, էիր», «անցկացրած եմ» և այլն օրինակներով:

Հարակատար դերբայով և նմ բայով կազմված ձևերը ժամանակներ է ճանաչել ականավոր լեզվաբան Ա. Այտրնյանը, որը և, ի տարբերություն նախորդների, վաղակատարի և հարակատարի ժամանակները առանձնացնելով իրարից, վաղակատարն ու անցյալի վաղակատարը կոչում է հաճախակի անորոշ (տեսեր եմ, ես, է. ենք, էք, են) և գերակատար անորոշ (տեսեր էի, էիր, էր. էինք, էիք), իսկ հարակատարն ու անցյալի հարակատարը՝ հաճա-

⁴ Ս. Արեղյանը իր այդ ուսմունքը ներկայացրել է «Տարական քերականություն» (Թիֆլիս, 1910), «Աշխարհարարի շարահիսություն» (Վաղարշապատ, 1912), «Հայոց լեզվի տեսություն» (Երևան, 1931) աշխատություններում և «Բայի եղանակներն արևելյան աշխարհարարում» հոդվածում («Արարատ», 1912, № 1, 2):

⁵ Տե՛ս Schrodner, Thesaurus linguae Armenicae (Արամեան լեզուին դանձ), Ամստերդամ, 1711, էջ 314:

⁶ Տե՛ս Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. V, Երևան, 1950, էջ 142—145:

կատար (տեսած եմ, տեսած ես, տեսած է) և զերակատար կամ վաղակատար (տեսած էի, էիր, էր) ժամանակներ⁷:

Վաղակատար և հարակատար դերբայներով կազմված ժամանակների բմբռնումը յուրատեսակ պատկեր է ներկայացնում Ստ. Պալասանյանի աշխատություններում. նա սկզբնական շրջանում գրեթե նույնությամբ որդեգրում է Ա. Այտրնյանի տարաբաժանումը և եթե նրա պես վաղակատարն ու անցյալի վաղակատարը կոչում է հարակատար անորոշ (գրել եմ, գրել ես, գրել է. գրել ենք, գրել եք, գրել են) և զերակատար անորոշ (գրել էի, գրել էիր, գրել էր. գրել էինք, գրել էիք, գրել էին), ապա հարակատարին ու անցյալի հարակատարին տալիս է փոքր-ինչ տարբեր անվանումներ՝ հարակատար որոշյալ (գրած եմ, գրած ես, գրած է. գրած ենք, գրած էք, գրած են) և զերակատար որոշյալ (գրած էի, գրած էիր, գրած էր. գրած էինք, գրած էիք, գրած էին)⁸, 1874 թ. հրատարակած իր «Քերականութիւն մայրենի լեզուի» աշխատության մեջ Պալասանյանը, սակայն, կարծես թե հրաժարվելով երևույթի այդպիսի բմբռնումից, վաղակատար ու հարակատար, ինչպես նաև անցյալի վաղակատար ու անցյալի հարակատար, ժամանակները ի մի է բերում և առաջինները դիտում իբրև մի ժամանակի՝ վաղակատարի, իսկ երկրորդները՝ գերակատարի երկու արտահայտություններ⁹: Եվ վերջապես՝ նույն քերականության V հրատարակության մեջ էլ նա վաղակատար ու գերակատար համարելով միայն վաղակատարն ու անցյալի վաղակատարը՝ հարակատարի ու անցյալի հարակատարի մասին ոչ մի հիշատակություն չի անում, թեև «կարդացած կը լինեմ, կարդացած կը լինես» և նման ձևերը սահմանական եղանակի ապառնի բաղադրյալ ժամանակ է դիտում¹⁰: Վիճակը սուսանձնապես չի փոխվում Ստ. Պալասանյանի հետևորդ քերականների աշխատություններում. նրանցից ոմանք (Ա. Արարաջյան, Ա. Բահաթրյանց, Ն. Տեր-Ղևոնդյան) շեն արձանագրում հարակատար դերբայով կազմված ժամանակների փաստը, ոմանք (Հ. Թումանյան) շարունակում են դրանք ներկայացնել վաղակատարի և անցյալի վաղակատարի հետ, իսկ ոմանք էլ (Ն. Մելիք-Թանգյան) առանձնացնելով վերջիններիցս՝ ինքնուրույն ժամանակներ են համարում:

Հարցի պատմության այս համառոտ նկարագրությունը ինքնին ցույց է տալիս, որ նախաաբեղյանական շրջանի քերականները հիմնականում նկատելի ու ընդունելի են հարակատար դերբայով և նա սժանդակ բայով կազմված ժամանակների գոյությունը, թեև հայերենի բայական համակարգի (ներառյալ նաև հարակատարն ու անցյալի հարակատարը) հարցը տակավին դիտական խոր լուսաբանության չէր արժանացել, և դրությունը հենց Մ. Աբեղյանի բնորոշմամբ՝ շարունակում էր մնալ անբավարար:

Դա էլ նկատի առնելով, անվանի հայագետը լոջորեն զբաղվում է հայերենի բայերի խոնարհման խնդրով և որոշում բայի եղանակա-ժամանակային

⁷ Տե՛ս Ա. Այտրնյան, Քննական քերականութիւն աշխարհարար կամ արդի հայերէն լեզուի, 'Լիեննա, 1866, էջ 94:

⁸ Տե՛ս Ս. Պալասանյան, Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 74:

⁹ Տե՛ս Ս. Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1874, էջ 141, 148:

¹⁰ Տե՛ս Ս. Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, էջ 159:

ձևերի դասակարգման գիտական ու նիշտ նիմունքը: Այդ հիմունքը բայերի գործողության կերպերի (կատարվող, կատարված, կատարելի և պարզ), դեր-բայական ձևերով և օժանդակ բայով կազմվող ժամանակների արտահայտած իմաստների և նրանց միջև եղած փոխադարձ կապի ու հարաբերության ճիշտ բմբոնում էր, որ լայն հնարավորություն բնականեց նրան՝ բացահայտելու հա-լերենի բայի խոնարհման համակարգի էությունը և որոշելու բայի եղանակնե-որ իրենց բոլոր համապատասխան ժամանակներով: Նույն այդ բմբոնմամբ Մ. Աբեղյանը սահմանադատեց բայի խոնարհման դիւավոր ու երկրորդական ձևերն իրարից, հիմնական ուղղորդությունը իրավացիորեն դարձնելով առա-ջինի վրա, որ բայի խոնարհման համակարգի առանցքն է կազմում: Բայի խոնարհման գլխավոր ձևերն էլ գիտական դասակարգման ենթարկելիս՝ նա իր մտքի խորաթւփսնցոթյամբ զծեց նաև սահմանական եղանակի շրջանակ-ները, գիտականորեն հիմնավորելով ու հաստատելով, որ նա ունի միայն 9 ժամանակ, որոնցից երկուսն էլ հենց հարակատարն ու անցյալի հարակա-տարն են:

Դա ապացուցելու համար մեծ լեզվաբանը ցույց տվեց վաղակատար ու հարակատար դերբայներով կազմված ժամանակների իմաստային տարբերու-թյունները և, ավելի քան 50 տարի առաջ հարակատարին ու անցյալի հարա-կատարին տալով իրենց մշտական անձնագիրը, ապահովեց նրանց, իրրև ա-ռանձին ու ինքնուրույն ժամանակների, տեղը սահմանական եղանակի կազ-մում: Այսպես, դեռևս 1910 թ. իր «Տարրական քերականության» մեջ նա նկա-տում է, որ «Հարակատար ժամանակները ցույց են տալիս մի անցյալ եղելու-թյուն, որի հետևանքը իրրև դուրքնուն հարատևում է մինչև խոսողի ներկան կամ մինչև մի անցյալ ժամանակակետ, մինչդեռ վաղակատար ժամանակները պարզապես հայտնում են ներկայի կամ անցյալ ժամանակակետի նկատմամբ կատարված եղելություն՝ առանց ուղղարձելու, թե գործողության հետևանքն իրրև դրության հարատևում է թե չէ»¹¹: Նույն այդ միտքը ավելի որոշակի ար-տահայտված ենք տեսնում «Աշխարհարարի շարահյուսության» մեջ. «Այս ժամանակների մեջ,—կարդում ենք այդտեղ,—առանձնապես շեշտվում է անց-յալ գործողության հետևանքը, որ իրրև մնայուն դուրքնուն հարատևում է՝ հա-րակատարին մինչև խոսողի ներկան,—ուստի և այս ժամանակը իսկապես մի ներկա ժամանակ է կամ հարակատար ներկա,—իսկ անցյալին մինչև մի անցյալ ժամանակակետ, մինչդեռ վաղակատար ժամանակները հայտնում են պարզապես ներկայի կամ անցյալի նկատմամբ կատարված եղելություն՝ ա-ռանց առանձին ուղղարձելու գործողության հետևանքի իրրև դրության հա-րատևելու վրա»¹²:

Այս, մեր կարծիքով միանգամայն ճիշտ տեսակետի դեմ նախքան բնկ. Հ. Ա. Ասմանգուլյանը հանդես է եկել մեայն Ստ. Լիսիցյանը, որը խորամուխ շլիներով Մ. Աբեղյանի մշակած՝ բայի խոնարհման կուտ համակարգի էությանը և նրա առաջարկած սխեման համարելով «շատ բարդ ու խճճված», այն «ծայ-րեծայր մերժելու» հետ մեկտեղ չի բնդունում հարակատարի առանձին ու ինք-նուրույն ժամանակներ լինելը և առանց ապացուցման ասում է, թե «Այդ ձևերը

11 Մ. Աբեղյան, Տարրական քերականություն, Թիֆլիս, 1910, էջ 65:

12 Մ. Աբեղյան, Աշխարհարարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, էջ 228:

սկսեց է ճանաչվեն երկրորդ ձև ներկա վաղակատարի և անցյալ վաղակատարի, զուգընթաց եկել են, գրել են, եկել էի, գրել էի... ձևերին»¹³:

Այսպիսով, եթե Մ. Արեղյանի մշակած համակարգը շրջադրվում է Մտ. Լիսիցյանը, այնուամենայնիվ, հարակատարն ու անցյալի հարակատարը չի հանում բայի խոնարհման համակարգից ու սոսկ վաղակատար ժամանակների երկրորդ ձևեր է համարում, ապա ընկ. Ասմանգուլյանը, շատ ավելի առաջ տնայնացնելով, պահանջում է նրանք ամբողջապես վտարել այնտեղից, պնդելով, թե հարակատարով ու օժանդակ բայով ժամանակներ չեն կազմվում, թե քերականները կողմից ճանաչված հարակատարն ու անցյալի հարակատարը սահմանական եղանակի ժամանակներ չեն, այլ՝ «հարակատար դերբայ + նմ կառուցվածքը շարահյուսական տեսանկյունից՝ իր բովանդակությամբ որակողական ստորոգյալ է և ոչ թե պրոցեսային ստորոգյալ: Իսկ որակողական ստորոգյալը իր կառուցվածքով բաղադրյալ ստորոգյալ է, որն իրենից ներկայացնում է բառակապակցություն և ոչ թե բառի վերլուծական ձև»¹⁴:

Ի՞նչ փաստեր կամ ապացույցներ է բերում ընկ. Ասմանգուլյանը դրա համար:

Նա ամենից առաջ ջանում է ցույց տալ, թե հայ քերականները իբր թե ճիշտ չեն բացահայտում ժամանակի քերականական կարգը, որ ոմանք բայի համար շրջադրվում են միայն երեք (ներկա, անցյալ և ապառնի, ոմանք՝ ինը և ոմանք էլ՝ 58 ժամանակ: Եվ այնուհետև նա այն մեղադրանքն է ներկայացնում, որ իբր հայ քերականագիտության մեջ բավարար չափով չի բացահայտվել վաղակատար և հարակատար դերբայների միջև եղած էական տարբերությունը, սակայն էլ հենց այն պատճառներից մեկն է, որ հարակատարով և նմ օժանդակ բայով կազմված ձևերը բայի ինքնուրույն ժամանակներ են համարվել:

Ով ծանոթ է բայի խոնարհման համակարգի ուսումնասիրության բնագավառում հայ լեզվաբանական մտքի ձեռք բերած նվաճումներին, չի կարող չնկատել, որ ընկ. Ասմանգուլյանը հենց իր վկայությամբ «քերականական գրականության հետ ամենաթուրքիկ» կերպով է ծանոթացել և ժամանակագրության սկզբունքի անտեսմամբ՝ մի կողմից, լեզվաբանների միայն առանձին արտահայտությունների վրա հենվելով՝ մյուս կողմից, ըստ էության ճիշտ չի ներկայացրել բայի խոնարհման հարցում հայագիտության ունեցած բարձր նվաճումները:

Ընկ. Ասմանգուլյանը, օրինակ, բանը այնպես է պատկերում, որ իբր թե լեզվաբան Հ. Բարսեղյանն է իր «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» աշխատության մեջ հաստատում, որ «Բայն ունի գործողության կատարման երեք ժամանակ» և «շարունակում է մնալ այն կարծիքին, որ հայերենում բայն ունի երեք ժամանակ՝ ներկա, անցյալ և ապառնի, և ոչ թե հիսուսու լի կամ ինը, ինչպես սովորաբար տրվում է դպրոցական նորմատիվ քերականության մեջ»¹⁵:

Բայց ի՞նչ հաստատման մասին կարող է խոսք լինել, երբ, ասենք, Գ. Թրակացու քերականության հայ մեկնիչներից սկսած բոլոր հայ լեզվաբանները

¹³ Մտ. Լիսիցյան, Ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը, Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 19, Երևան, 1941, էջ 479:

¹⁴ «Պատմա-բանասիրական հանդես», 1963, N 2, էջ 160:

¹⁵ Նույն տեղում, էջ 153:

(և ոչ միայն հալ լեզվաբանները) բայի գործողության կատարման երեք զլխավոր ժամանակ են ընդունել: Ի հաստատումն դրա նշենք միայն մի քանի վկայություններ. «Ժամանակը... զլխավորաբար երեք է. 1. ներկա... 2. անցյալ... 3. Ապառնի»¹⁶. «Ամենայն գործողություն կատարվում է մի որևիցե ժամանակում. այդ ժամանակները երեք են. ներկա, անցյալ և ապառնի»¹⁷. «Բայի ժամանակները, որոնք ցույց են տալիս, թե երբ է կատարվում եղևությունը, երեք են՝ ներկա, անցյալ և ապառնի»¹⁸. «Բայի հիմնական ժամանակները երեքն են՝ ներկա, անցյալ, ապառնի» և այլն և այլն:

Ընդունելով բայի գործողության կատարման երեք հիմնական ժամանակ, ոչ մի լեզվաբան չի ժխտել բայի խոնարհման համակարգի մեջ մտնող այն այլևայլ ժամանակները, որոնք միմյանց նկատմամբ տարբերություններ ներկայացնելով՝ բոլոր դեպքերում ներկա են, անցյալ կամ ապառնի: Երևույթը այդպես է ըմբռնել (և չէր կարող այլ կերպ ըմբռնել) լեզվաբան Հ. Բարսեղյանը, որի աշխատության մեջ էլ ներկայացված են բայի խոնարհման ոչ միայն զլխավոր, այլև երկրորդական ձևերը²⁰: Ինչ վերաբերում է այն բանին, թե իբր «դպրոցական նորմատիվ քերականության մեջ» սովորաբար բայի ինը ժամանակ է տրվում, ապա պետք է ասել, որ իրականում այդպիսի բան չկա, և հայտնի է, որ միայն սահմանական եղանակն ունի բայի խոնարհման 9 զլխավոր ժամանակ:

Նմանապես հարակատար և վաղակատար դերբայների միջև եղած իմաստային տարբերությունների մասին հայ լեզվաբանների (հատկապես պրոֆ. Կ. Սևակի) հայտնած մտքերը մեկնաբանելիս՝ հոգվածագիրը ջանում է ընթերցողին համոզել, որ նրանցից ոմանց կարծիքով հարակատար դերբայի արտահայտած գործողության մեջ «հարատևող արդյունքը, ըստ էության, հանդես է գալիս որպես առարկայի (փ) որոշակի որակ, հատկանիշ»²¹:

Սինչդեռ փաստերը այլ բան են առում. վաղակատար ու հարակատար դերբայների և որանցով կազմված ժամանակների միջև եղած տարբերությունների մասին գիտականորեն խոսողները երբեք չեն անտեսել կաբևորը՝ այն, որ հարակատարը յուրահատուկ գործողության ընդհանուր գաղափար, իսկ նրանով կազմված ժամանակները ենթակայի որևէ գործողություն կամ եղևություն են արտահայտում:

Այսպիսով, ընկ. Ասմանզուլյանի ձգտումը՝ հակասություններ ու տարակարծություններ տեսնել հայերենի բայի խոնարհման համակարգի մասին հայ քերականների ունեցած ըմբռնումների մեջ և դրանք առաջին ապացույցը կամ փաստարկը դարձնել «հայերենի բայի խոնարհման ձևերի համակարգի, մասնավորապես արդի գրական հայերենի բայի ժամանակային ձևերի թվի և կազմի հարցը» իբր թե վերանայելու ու ճշտելու համար, տեղին չէ և բնավ իր օգտին չի խոսում:

16 Ա. Այտրնյան, Քննական քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզուի, էջ 53:

17 Ս. Պալասյան, Քերականություն մայրենի լեզուի, էջ 55:

18 Մ. Արևիկյան, Աշխարհարարի շարահիսություն, էջ 224:

19 Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասագիրք, Երևան, 1957, էջ 182:

20 Տե՛ս Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 313—316:

21 «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 155:

Երկրորդ անգամ կամ փաստարկը, որով ընկ. Ասմանդուլյանը ձգտում է հաստատել, որ հարակատարով ու եմբայով արտահայտված ձևերը իրոք բայական ժամանակներ չեն, այն է, որ նրանք, իբր, բացառապես «նշում են առարկայի (— ենթակայի) վիճակը, ենթակային ստորոգյում է վիճակ, տեղական կամ ժամանակավոր հատկանիշ և ոչ թե պրոցես»²²։ Այստեղից էլ այն եզրակացությունն է արվում, թե «հարակատար ղերբայով և եմբայով կազմված կապակցությունների մեջ» հարակատար ղերբայը՝ ստորոգելիական վերադրի, իսկ «եմ» օժանդակ բայը հանդույցի ղեր է կատարում։ Այսպիսով, դուրս է գալիս, որ հարակատար ու անցյալի հարակատար ճանաչված ժամանակները ոչ թե ներկա և անցյալ ժամանակակետերի համեմատությամբ մնացյուն արդյունքով հարատևող դործողություն կամ եղելություն, այլ դուրս «առարկայի որակի, հատկանիշի իմաստ» են արտահայտում։ Նման բմբնումբ բացարձակապես սխալ է. հարակատար ղերբայը, անցյալում կատարված, բայց մնացյուն արդյունքով հարատևող դործողության կամ եղելության բնդհանուր դադափար արտահայտելով, ճիշտ է, անկախաբար դործածվելիս կարող է առարկայի (և, իհարկե, ոչ միայն ենթակայի) որակային հատկանիշ ցույց տալ՝ կատարելով որոշիչի պաշտոն, բայց եմբայի հետ նա ոչ թե առարկայի որակ կամ ինչ-որ սոսկ տեղական կամ ժամանակավոր հատկանիշ, այլ ենթակայի դործողություն կամ եղելություն է արտահայտում և հետևաբար՝ ոչ թե բաղադրյալ, այլ բայական պարզ ստորոգյալ է կազմում։

Հայ քերականագիտության կողմից շատ վաղուց քաղաքացիության իրավունք ստացած այդ տեսակետը արդեն ոչ ավելորդ անգամ հաստատենք մի կոնկրետ փաստով։ Նար-Դոսի «Սպանված աղավնի» վիպակի առաջին մասում հարակատարն ու անցյալի հարակատարն ունեն 32 դործածություն, ինչպես, օրինակ՝ «Հանգիստ նստած եմ ձեր տանը» (էջ 415), «Վաղուց արդեն մեծ եմ անշուշտ» (էջ 415), «— Թեև սիրահարված եմ, բայց լողիկայով եմ խոսում» (էջ 419), «Վերջիններիս տակ զրված էր թղթախաղի ծալովի մի-մի սեղան» (431), «...Մեկի բազուկը կտրված էր» (431), «Նրանց մկանների ուժը բնությունից թե դաստիարակությունից բնդարմացած է» (էջ 450), «Երկինքը դեռ երկար ժամանակ լուսավորված էր վերջալույսի մեռնող փայլով» (էջ 459) և այլն և այլն²³։

Որ իրոք բերված օրինակների բնդծված ձևերը բայական ժամանակներ ու բայական պարզ ստորոգյալ են և ոչ թե առարկայի հատկանիշ արտահայտող ստորոգելիական վերադրից ու հանդույցից կազմված բաղադրյալ ստորոգյալ, դա ակնհայտ ձևով հաստատվում է ոչ միայն այն բանով, որ նրանք ենթակայի կողմից վաղուց սկսված և ներկա կամ անցյալ ժամանակակետերի համեմատությամբ որոշ արդյունքով հարատևող դործողություն կամ եղելություն են ցույց տալիս, այլև նրանով, որ իրենց բովանդակության թելաշրմամբ առաջադրում են այնպիսի հարցեր (ի՞նչ եք արած, ի՞նչ է եղած, ի՞նչ էր արված և այլն), որոնք միայն բայի խոնարհման ձևերին են հատուկ։

Հարակատար ղերբայով և եմբայով կազմված ձևերի բայական ժամանակներ լինելը հաստատվում է նաև այն բանով, որ նրանք ներդաշնակվում են սահմանական եղանակի մյուս բաղադրյալ ժամանակներին՝ դրանց պես

²² Նույն տեղում, էջ 160։

²³ Տե՛ս Նար-Դոս, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1955։

երևան հանելով ձևաբանական-քերականական այնպիսի հատկանիշներ, որոնք բնորոշ են դերբայով և եմ օժանդակ բայով կազմված ժամանակներին. ուստի՝ պարզ է, եթե, օրինակ, նստում եմ—նստում էի, նստելու եմ—նստելու էի, նստել եմ—նստել էի՝ դերբայից և եմ բայից կազմված ձևերը ժամանակներ են, ապա նստած եմ և նստած էի ձևերը ևս չեն կարող ժամանակներ չլինել, որովհետև, ասենք, դրանք վաղակատարի ու անցյալի վաղակատարի հետ մեծ ընդհանրություններ ունենալով՝ նրանցից տարբերվում են միայն գործողության կամ հղելության հարատևող կամ որոշ մնայուն արդյունքով, որը և նրանց առանձին ու ինքնուրույն ժամանակներ կոչվելու իրավունք է տալիս:

Ավելացնենք, որ, ճիշտ է, հայերենի բոլոր բայերը չեն, որ հարակատար և անցյալի հարակատար ժամանակներ են կազմում, բայց դա էլ, ինչպես Մ. Աբեղյանն է ասացուցել²⁴, հարակատար դերբայի իմաստով կամ ավելի կոնկրետ ասած՝ այն բանով է պայմանավորվում, որ շատ բայեր պարզապես «դրության հարակալության նշանակություն» չեն արտահայտում: Եվ հետևաբար՝ հարակատար դերբայով և եմ բայով կազմված ձևերի համեմատաբար սահմանափակ գործածությունը ևս չի ժխտում նրանց իրոք լիիրավ ժամանակներ լինելը: Այսպիսով, պարզ է, որ հարակատարն ու անցյալի հարակատարը իբրև ժամանակներ չճանաչելու համար ընկ. Ասմանդուլյանի բերած երկրորդ փաստարկը կամ ասացույցը ևս խախտում է և դարձյալ քննադատության չի դիմանում:

Նման բնույթ է կրում ընկ. Ասմանդուլյանի այն պատճառաբանությունը, թե վերլուծական ձևեր կազմող դերբայները «բազալապես (ընդգծումը հեղինակինն է—Ա. Մ.) կապակցվում են եմ բայի հետ՝ որպես օժանդակ բայի», իսկ «հարակատար բառակապակցության մեջ է մտնում ոչ միայն եմ բայի (ինչպես նաև լինել բայի՝ հմմտ. նստած լինել, հոգնած լինել և այլն), այլև ունենալ և կամ բայերի հետ»²⁵: Նրա կարծիքով հենց այդ «փաստը ինքնին խոսում է այն մասին, որ հարակատար դերբայով կազմված կապակցությունները բայի խոնարհման համակարգի մեջ չեն մտնում, վերլուծական ձևեր չեն հանդիսանում, որովհետև վերլուծական ձևի բաղադրիչները չեն կարող այլ բաղադրիչներով փոխարինվել»²⁶:

Այստեղ հոգվածագիրը ուղղակի ամեն կերպ աշխատում է լեզվի փաստերը համապատասխանեցնել ու հարմարեցնել իր՝ մեզ հայտնի մտքին. ուստի նա չի նկատում և կամ չի ուզում նկատել, որ հայերենում բայն ունի խոնարհման գլխավոր ու երկրորդական ժամանակներ, որ եթե զլխավոր բաղադրյալ ժամանակները արտահայտվում են որևէ դերբայով (անկատար, ասլառնի, վաղակատար և հարակատար) և եմ օժանդակ բայով, ապա երկրորդական բաղադրյալ ժամանակներում իբրև օժանդակ հանդես է գալիս լինել բայը, որը և այլևայլ ժամանակներ է կազմում ոչ միայն հարակատարի (զրած եմ լինում, զրած կլինեմ, զրած պիտի լինեմ, զրած եմ եղել և այլն), այլև անկատարի -ելիս, -ալիս-ով ձևերի (զրելիս եմ լինում, զրելիս եմ եղել, զրելիս կլինեմ և այլն), ասլառնի դերբայի (զրելու եմ լինելու, զրելու եղիր, զրելու պիտի լինեմ) և նույնիսկ անկատար դերբայի առաջին ձևի (օրինակ՝ «նա ավարտել

24 Տե՛ս Մ. Աբեղյան, Աշխարհարարի շարահիստություն, էջ 228—230:

25 «Պատմա-բանասիրական հանդես», 1963, N 2, էջ 159:

26 Նույն տեղում:

է միջնակարգ դպրոց և պատրաստվում է եղել մանկավարժական դասընթացները մտնելու», Նար-Դոս, «Սպանված աղավնի», 429) հետ:

Հետևաբար՝ լսելի, թե միայն հարակատար դերբայի հետ գործածվող եւմ օժանդակ բայն է փոխարինվում «այլ բաղադրիչով», նշանակում է անտեսել լեզվի օբյեկտիվ փաստերը և հայերենի բայի խոնարհման ձևերն ու նրա առանձնահատկությունները բնթերցողին ներկայացնել ոչ այնպես, ինչպես որ կան իրականում:

Ավելացնենք, որ Ասմանգույանի նաև այն պատճառաբանությունը, թե «եւմ բայի կապակցությունները հարակատար դերբայի հետ՝ ժխտականում եւմ բայի տեղի իմաստով ցուցաբերում են նույն առանձնահատկությունը, ինչ որ հանգույցով կազմված բաղադրյալ ստորոգյալ հանդիսացող կապակցություններ»²⁷, նախ՝ բացարձակ իմաստով ճիշտ չէ և ապա՝ հարակատարի և անցյալի հարակատարի բայական ժամանակներ լինելը ժխտելու ապացույց նույնպես չի ծառայում:

Որ հարակատար դերբայով և եւմ բայով արտահայտված կապակցությունները իբրև ոչ թե բայական ժամանակներ, այլ «որակողական իմաստով» բաղադրյալ ստորոգյալ կազմող ազատ բառակապակցություններ են, ընկ. Ասմանգույանը փորձում է հաստատել նաև անգլերենի ու հայերենի լեզվական իրողությունների բաղդատմամբ. մեկի տվյալները ձևելով կամ ազատորեն տարածելով մյուսի վրա, նա պնդում է, որ եթե անգլերենում *he is drunk* (=նա խմած է), *the chair is broken* (աթոռը կոտրված է) և նման կապակցություններում *is drunk*, *is broken*՝ ձևերը ժամանակներ չեն ճանաչվում և «անգլերենի վիճակ արտահայտող կրավորական կառուցվածքը (բաղադրյալ անվանական ստորոգյալ) կանոնավորապես թարգմանվում է հարակատար դերբայ+եւմ բառակապակցությամբ», ապա հայերենում «խմած է», «կոտրված է» և այլն ձևերը նույնպես ոչ թե բայական ժամանակներ, այլ բաղադրյալ անվանական ստորոգյալ պետք է համարել:

Բայց արդյոք այս կամ այն լեզվի բոլոր իրողություններն են, որ թարգմանվում են մի այլ լեզվի ճիշտ և ճիշտ նույն ձևերով, կամ թե չէ՝ բոլոր դեպքերում է արդյոք, որ տարբեր լեզուների քերականական կարգերը համապատասխանում ու համընկնում են իրար: Լեզուների պատմությունը այդպիսի բան չի ասում. ուստի և պատահական չէ, որ եթե իրոք անգլերենի «վիճակ արտահայտող կրավորական կառուցվածքը (բաղադրյալ անվանական ստորոգյալ) կանոնավորապես թարգմանվում է հարակատար դերբայ+եւմ կապակցությամբ», ապա, ինչպես վկայում է «Անգլերեն լեզվի դասագիրքը», որի հեղինակներից մեկը հենց ինքը՝ ընկ. Ասմանգույանն է, նրա *Future Perfect-ն* էլ (օրինակ՝ *I shall have written letter before you come*—«Նախքան քո գալը ես նամակը գրած կլինեմ», *We shall have finished this work by 6 o'clock tomorrow*—«Վաղը ժամը 6-ի մոտ մենք այս աշխատանքը վերջացրած կլինենք») «թարգմանվում է հայերենի երկրորդական բաղադրյալ ժամանակով (հարակատարի ապառնի ներկա), որ կազմվում է հարակատար դերբայի և լինել բայի օգնությամբ»²⁸:

27 «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 161:

28 Հ. Ա. Ասմանգույան, Մ. Ի. Հովհաննիսյան, Հ. Հ. Ոսկերչյան, Անգլերեն լեզվի դասագիրք, Երևան, 1961, էջ 232:

Այսպիսով, բոլոր այն փաստարկները, որ բերում է ընկ. Ասմանդույանը ապացուցելու համար, թե հարակատարն ու անցյալի հարակատարը բայական ժամանակներ չեն և պետք է դուրս բերվեն հայերենի խոնարհման համակարգից, խախտում ու հիմնադուրկ լինելով ոչ միայն այդ չեն հաստատում, այլև մի անգամ ևս ցույց են տալիս, որ նրանք իսկական բայական ժամանակներ են և երբեք չպետք է դուրս բերվեն հայերենի բայի խոնարհման բազմաճյուղ համակարգից:

Формы «հարակատար» и «անցյալի հարակատար»—

ГЛАГОЛЬНЫЕ ВРЕМЕНА

А. С. МАРКАРЯН

(Р е з ю м е)

Во втором номере «Историко-филологического журнала» за 1963 г. языковед А. А. Асмангулян выступила со статьей «К вопросу о системе форм спряжения армянского глагола», в которой утверждается, что в арменоведении нет точного представления «о системе форм спряжения армянского глагола, в частности о количестве и составе временных форм глагола в современном языке», и что будто бы большие разногласия имеются, в частности, при решении вопроса о выделении в армянском языке двух форм глагола, именуемых в армянской грамматике *վաղակատար* и *հարակատար*. Далее она выдвигает мысль о том, что формы в армянском языке, образующиеся от результативного причастия (*հարակատար դերբայ*) и вспомогательного глагола «*եմ*» (как, например, *նստած եմ...* *նստած ենք...* *նստած էի...* *նստած էինք...*), не являются глагольными временами изъявительного наклонения, а представляют собой свободные сочетания, выступающие в предложении как составное именное сказуемое.

Автор настоящей статьи не соглашается с А. Асмангулян и утверждает, что формы *հարակատար* и *անցյալի հարակատար*, т. е. формы, образующиеся от результативного причастия и вспомогательного глагола «*եմ*», являются настоящими глагольными временами армянского языка.